

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՕԶԻՏՈՐՆԵՐ

(20-րդ դար)

Ե Բ Ե Դ Ա Ն

Ա. — Ա.Լ.Բ.ՓՍԱՆԴԻՐ ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ

(Շարունակութիւն տես բազմավէպ, 1925 էջ 241)

VIII. «Երեք Արմաւենի»

Ա. Սպենդիարեանի երաժշտական ստեղծագործութիւնների մէջ առաջնակարգ տեղ է զբաղում «Երեք Արմաւենի» սիմֆոնիկ նկարը, որի նիւթը վերցրած է Լեւոնտովի համանման բանաստեղծութիւնից:

Այնտեղ ձեր առաջ նկարում է երաժշտական մի անմահ, անըջական երկիր, դա արարական աշխարհն է, ուր կանգնել են հսկայ արմաւենիները և ծանր հծծիւնով շարժում են իրենց գլուխները դէպի կապոյտ երկինքը: Նրանք բողոքում են իրենց ունայն կեանքի դէմ:

Ամայութեան մէջ մեզմ անցնում է ուղտերի կարաւանը: Նրանց համաչափ քայլերի ֆոնում հնչում են զանգակները: Վերջապիւն իջնում է կարաւանը արմաւենիների տակ: Այնտեղ տապաւն են սրում և կտրում ծառը, որ ծանր հծծիւնով վայր է ընկնում ու արտասուում... Եւ այդպէս ընկնում են երեք արմաւենիները... կրակի ահեղ բողոքի միջից՝ նրանց դառն արցունքների կարմիր բողոքը բարձրանում է դէպի երկինք: Եւ կարաւանը նորից շարունակում է իր ճանապարհը: Հնչում են զանգակների ներդաշնակ ձայները. ասես արեւելեան երգերի տխուր մեղեդին է դա, որ տարածւում է հեռու, շատ հեռու և թաղում մոռյլ խաւարում:

Ահա Լեւոնտովի այս բանաստեղծութիւնը հիմք է ծառայում կոմպոզիտորին, որի վրայ նա տաղանդով կառուցանում է հրաշալի արեւելեան բնանկարը: Երաժշտութիւնը լուսաբանում է բնագրի զլխաւոր վայրկեանները և կարծես դուք լսում էք ուղտերի համաչափ քայլերը, արմաւենիների հծծիւնը և զանգակների ներդաշնակ ձայները:

IX. «Ամաստ» օպերան

Ա. Օպերան գրելու շարժառիթը. — Ինչպիսի՞ հանգամանքների մէջ յղանում է Սպենդիարեանը «Ամաստ» օպերան գրելու միտքը:

1916 թիւն թիֆլիսում խորհրդակցում է բանաստեղծ Յովհաննէս Թումանյանի հետ հայկական օպերա ստեղծելու մասին: Որոշում են օպերայի նիւթը վերցնել Թումանյանի «Թմրկաբերդի առումը» ճեթածից: Վերջինս ձեռնարկում է գրել օպերայի «Լիրբէտտոն», բայց այդ նրան չի աշուղում: Այնուհետեւ Լիրբէտտոն կազմում է ուրա բանաստեղծուհի Սոֆիա Պարնոյը, օգտւելով Թմրկաբերդի առումի բառացի թարգմանութիւնից, որը յայտնի ուրա բանաստեղծ և քննադատ Սաքսիմիլիան Վլադիմիր կարծիքով կազմած է շատ յաշտ և պահպանում է Յով. Թումանյանի ստեղծագործութեան բնոյթը:

Թույլ թուամանանը խորհուրդ է տալիս օպերան անւանել « Գոհար », բայց Սպենդիարեանն աչքի առաջ ունենալով երաժշտութեան յարմարութիւններն՝ անւանում է « Ալմաստ »:

1918 թւի Յունիսին նա Սուդակի ավանում սկսում է գրել օպերան, որից կազմում է երեք մեծ կտորներէրց բաղկացած մի մեծ ստիւտա, որ առաջին անգամ նւագում են 1923 թւին Լինինգրադում: 1923 թ. Մայիսին նա աւարտում է Ալմաստի երաժշտութիւնը, որի մօտիւնները մեծ մասամբ օգտւում է արեւելեան և Սպիրիդոն Միլեքեանի հրատարակած « Շիրակ »ի երգերից: 1924 թ. Ապրիլին նա սկսում է օպերայի երաժշտութիւնը վերածել լարախմբի առանձին զործիքների: Մինչև օրս էլ դեռ կօմպօզիտօրն առանձին թափով մշակում է օպերայի երաժշտութիւնը:

Բ. « Ալմաստ »-ի համառօտ քովանդակութիւնը. — « Ալմաստ »ն ընդգրկում է « Թմրկութեան ատուր » ընթացիկում, որ վաղեմութիւնը, որ ներկայացնում է հետեւեալ պատկերը: Պարսից Նադիր շահը պաշարում է թմրկաբերդը: Նա իր աշուղին ուղարկում է հայոց դղեակը, որպէս զի իր սագի լարերով չընայ տիրուհուն դէպի իրեն գրաւէ: Թաթուլն իմանալով Նադիր շահի մտադրութիւնը, իր զօրքով յարձակում է նրա զօրքի վրայ և ջարդում: Թաթուլ յաղթութեան առթիւ ճոխ խնջոյք է սարքում, ուր նրա զօրավարներն հարբում են և թմրած քնում: Նադիր շահը այդ հանգամանքից օգտւելով՝ յարձակում է բերդի վրայ և կոտորում հայերին: Սպանւում է Թաթուլը, իսկ տիրուհին գերի ընկնում: Շահի հարցին, թէ ո՞վ է անելի քաջ, ի՞նքը թէ Թաթուլը, տիրուհին պատասխանում է՝ Թաթուլը: Դրա վրայ շահը զայրացած՝ տիրուհուն բարձր ժայռի գագաթից ձգել է տալիս մի անդունդ, ուր նա կերակուր է դառնում գազանների և անգղանիւնի:

Ահա պատմական այս ավանդութիւնն երաժշտական յղացման նիւթ է դարձնում Ալ. Սպենդիարեանը « Ալմաստ » խորագրով, որ Հայկական-արեւելեան գեղարուեստական օպերայի առաջին և խոշոր յաղթանակն է:

Գ. « Ալմաստ » օպերան զեղարուեստական տեսակէտից. — « Ալմաստ » օպերան կարելի է դնել Ալ. Սպենդիարեանի լուսագոյն ստեղծագործութիւնների շարքում: Ունի հարուստ բովանդակութիւն, որի մէջ հեղինակը հանճարեղ հմտութեամբ օգտագործում է արեւելեան թեմաները:

Իր պատմական էպիզօդներով և երաժշտական գունեղ և հիւթալի հիւսածքով « Ալմաստ »ը ներկայացնում է գեղարուեստական սքանչելի մի աշխարհ: Այնտեղ ցոլանում է ձեր առաջ արեւելքի կեանքը — հայկական և պարսկական — իր բնորոշ և առանձնայատուկ գծերով: Առանձնապէս գունեղ են գծւած կովկասի և արեւելքի կենցաղը, պարսկական մարշը, ազօթը, տիրուհու սքանչելի պարը, հայ կանանց նագանի պարերը: Այդ բոլորն իրենց նուրբ երանգներով և գեղարուեստական պատկերներով ցոլանում են օպերայում մի բացառիկ հմտութեամբ: Գնդեցիկ են նայպէս Նադիր շահը, տիրուհին, Թաթուլը, աշուղը, պարսկուհիները, որոնք իրենց զրամատիքական ապրումներով կեանք են ներշնչում ողջ օպերային: Սակայն առանձնապէս ուշագրաւ են. 1. « Պարսկական Նադիր շահը և հայկական զօրավար Թարսի »-ը, 2. « Թարսի »-ի պատիւն սարքած ճոխ խնջոյք » և 3. « Դառնաճառարներ »: Այդ տեսարանները երանգաւորւած են երաժշտական խոշոր և փայլուն արժանիքներով:

Առհասարակ « Ալմաստ » օպերան իր երաժշտական կառուցւածքով գեղարուեստական լուրջ կուլտուրայի արդիւնքն է: Այնտեղ արեւելքի երաժշտութեան երանգների հետ իշխում է արեւմտեցի երաժշտութեան տեխնիկան, իր ամենանուրբ գծերով:

X. Այլ Սպենդիարեանի դերը

Հայ երաժշտական աշխարհի ամենատաղանդաւոր կոմպոզիտորներից մէկն է Ալ. Սպենդիարեանը, որի տաղանդն երաժշտական ասպարէզի ֆոնի վրայ դրել է արդէն իր բնորոշ կնիքը:

Առանձնապէս ուսումնասիրել է նա կոմպոզիցիայի թէօրիան և այդ ուղղու-
թեամբ արել է նշանակալից նաւահումներ: Նա առաջինն է, որ հիմք է դրել իսկական
արեւելեան գեղարւեստական երաժշտութեան, որի մէջ ցոլանում է զգաւորապէս
Ղրիմի թաթար և մասամբ էլ հայ ժողովրդի հոգին այնքան թովիչ և դիւթիչ
խաղերով:

Նոյնպէս նա առաջինն է, որ սկիզբ է դրել հայկական — արեւելեան իսկական
գեղարւեստական օպերային: Նրա տեխնիկական փորձը հնարաւորութիւն է տալիս
ներան մօտենալու արեւելեան երաժշտութեան, ամենալայն նաւահումների տեսակէտից:
Այս բոլորի վրայ աւելացնենք և այն, որ նրա շնորհիւ զարգանում է այսօր
մասսաների մէջ սիմֆոնիկ օրկէստրի և համերգների ճաշակը:

Նրա զգաւոր լոգունքն է. — երաժշտութիւնը ժողովրդի համար: Այդ իդէալով
էլ տողորած՝ նա մինչև օրս մի առանձին արտասովոր ոգեւորութեամբ շրջում է
քաղաքից քաղաք — Երևան, Թիֆլիս, Բագու — և խորհրդային աշխատաւորու-
թեան լայն խաւերի համար կազմակերպում մի շարք սիմֆոնիկ համերգներ: Այդ
ուղիով նա մի կողմից ժողովրդների մէջ սէր է զարթեցնում դէպի սիմֆոնիկ երա-
ժշտութիւնը, միւս կողմից ազնւացնում է նրանց գեղարւեստական ճաշակը, Հէնց
դրանով էլ բնորոշում է նրա մեծութիւնն ու արժանիքը:

Բ. — ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ

I. Երաժշտագէտը

Հայ երաժշտութեան լիրիքական արւեստի լաւագոյն ներկայացուցիչն է Ռո-
մանոս Մելիքեանը, որ մինչև օրս էլ առանձին ուսումնասիրութեան նիւթ չի
դարձրել և որի երաժշտական լաւագոյն ստեղծագործութիւնները դեռ մնում են
անտիպ:

Տասնընից տարիներից ի վեր ծառայում է նա հայ երաժշտութեան: Այդ
տասնընից երկար տարիների ընթացքում նա իր երաժշտական տաղանդով և գե-
ղարւեստական հասկացողութեամբ նոր նաւահումներ է արել հայ երաժշտութեան
բնագաւառում:

Այն ինչ նա երազել է և ստեղծագործել, ինչ նա յղացել է և կերտել
տարիների ընթացքում, երաժշտական — գեղարւեստական մի ամբողջ աշխարհ է,
կենդանի, խօսուն, նկարչական: Դուք ապրում էք այդ աշխարհում և ստանում
գեղարւեստական խոր տպաւորութիւններ: Այնտեղ ձեր առաջ պատկերանում է
ինքը՝ երաժիշտը, իր գեղարւեստական ապրումներով ու յոյզերով, իր մասնաշա-
տուկ տրամադրութիւններով և հոգեբանութեամբ: Սակայն նա մենակ չէ, այլ
ժողովրդի մէջ: Նրա երգերը բղիւսում են հազարաւորների սրտերից և զգացմունք-
ներից: Այդ բոլորը նա այնպիսի ցայտուն, կենդանի գոյներով և հնչիւններով է
նկարում, որ դուք տեղափոխւում էք նրա ստեղծած գեղարւեստական աշխարհը
և զգում նրա հոգու յոյզերը, իդէալները, ունկնդրում էք նրա ձայնին, մտածում:

ներին... նա յուզում է ձեր սիրտը, փոթորկում ձեր հոգեկան աշխարհը: Այդպէս էլ պիտի լինի իսկական գեղարւեստագէտը: Եւ հէնց այդտեղ էլ կայանում է Ռոմանոս Մելիքեանի արժէքը:

Թէ մի է այդ արւեստագէտը, ինչ միջավայրի ու իրականութեան ծնունդ է, որ զպոռնիների ազդեցութիւնն է կրել, ինչ է երգել տասներհինգ տարիների ընթացքում, ինչպիսի նաճուճներ է արել հայ երաժշտութեան ֆրոնտում, ինչ են ներկայացնում նրա ստեղծագործութիւններն իրենց էութեամբ և հոգեկան կառուցաձեւով, որն է նրա երաժշտութեան ոյժն ու խորութիւնը. նրա ստեղծագործութիւնների մէջ որ երաժշտութիւնն է հնչում աւելի զօրեղ և ինչպիսի գոյներով. — ահա մի շարք էական հարցեր, որոնցով միայն կարող ենք բնորոշել և հասկանալ Ռոմ. Մելիքեանի իսկական արժանիքը:

Անցնինք այդ հիմնական հարցերին.

II. Ռոմանոս Մելիքեանի կեանքն ու գործունէութիւնը.

Մինչև օրս էլ մենք չունենք Ռոմ. Մելիքեանի կեանքի անփոփ նկարագրութիւնը. Հրապարակի վրայ կան միայն կցկտուր, պատահական տեղեկութիւններ, որոնք սակայն չեն պատկերացնում և պարզաբանում նրա կեանքի պատմութեան գէթ բնորոշ գծերն ու գլխաւոր շրջանները:

Նրա կենսագրական տւեալները կազմելիս օգուեցինք շնորհալի երգչուհի Արուս Բարալեանի, (երաժշտագէտի ընկերոջ) ձեռագրից: Բացի այդ՝ ձեռքի տակ ստեցել ենք զանազան քննադատականներ և նամակներ: Այդ բոլոր նիւթերը Ռ. Մելիքեանի վերաբերեալ իսկական և լաւագոյն աղբիւրներն են: Մանօթանանք:

Ռոմ. Մելիքեանը ծնւել է 1883 թ. Հոկտեմբեր 1ին Հիւսիսային Կովկասի Ղզլար քաղաքում, որ իր բնակարանով ներկայացնում է մի գեղեցիկ պանօրամա. — կանաչ տափաստաններ, ընդարձակ շամբիներ, ծառազարդ պարտէզներ, խաղողի այգիներ մի առանձին՝ գրաւութիւն են տալիս այդ փոքրիկ քաղաքին: Տեղացի հայերը, որ գաղթել են Պարսկաստանի և Ղարաբաղի շրջաններից, յայտնի են իրենց դիցազնական և ասպետական կեանքով: Նրանք սիրել են երգն ու արւեստը: Գիտին ու պարը... Ահա այդ ժողովրդի ծոցում սնւել և մեծացել Ռոմ. Մելիքեանը: Նրա հայրն եղել է այգեպան և միաժամանակ քաղաքի հասարակական գործիչներից մէկը: Իրրեւ այդպիսին՝ հասարակական գիծ է ներշնչում իր որդուն՝ Ռոմանոսին:

Նրա ամբողջ մանկութիւնն անցնում է այգում, բնութեան զրկում, ուր նա ստանում է անմիջական և բազմազան տպաւորութիւններ, թռչունների աշխարհը, կանաչազարդ շամբիները, աստղազարդ երկինքը, շրջի ու կախարդական արշալոյսը, խորհրդաւոր ու հմայիչ վերջալոյսը, հեռաւոր Կովկասի հրավառ կատարները, հեզանազ լուսինը խորապէս ներգործում են նրա մանուկ հոգու վրայ: Մինչև օրս էլ նա ամբողջ հոգով կապւած է բնութեան հետ. յաճախ թողնում է նա քաղաքը և օրերով թափառում դաշտերն ու լեռները... բնութեան զրկում սիրում է նա դիտել փոթորիկը, մրրիկը, տապը, որոտն ու կայծակը, զարնան չաղ թռչունների հեռում անյայտացող ձայները... Այդ բոլորը լցնում են նրա ամբողջ էութիւնը մի զարմանալի զգացումով: Սակայն այդ դեռ բոլորը չէ:

Ռոմ. Մելիքեանն ինքը պատմում էր մեզ, որ դեռ մանուկ հասակում ակառաւարտ է եղել մի շարք ժողովրդական կոմիւնների Լեռնական լեզգիները սարերից

յաճախ արշաւում են Ղզլար և Թաւանում ժողովրդին: Շատ յաճախ տեղի են ունենում կատաղի ընդհարումներ, որոնք վերջանում են ծանր ու սրտառուչ դէպքերով: Այդ բոլոր դէպքերն անկասկած խոշոր ազդեցութիւն են գործում նրա մանուկ հասակի մտածողութեան և երեակայութեան վրայ: Այդ ընդհարումների շուրջ ժողովուրդը հիւսում է բազմաթիւ լէզէնդներ, հէքիաթներ խառն ասպետական և միստիքական մօտիւններով: Ռումանոսն իր մանկութեան շրջանում դաստիարակւում է այդ ժողովրդական հէքիաթներին ու պատմութիւնների աշխարհում: Անշուշտ այդ տպաւորութիւնները չէին կարող չանդադարապէս նրա երաժշտական խառնածոքի վրայ: Եւ մենք տեսնում ենք, որ յետագայում իր երաժշտական գործերը կերտելիս ներշնչւում է նա այդ սկզբնական տպաւորութիւններից:

Սկզբնական ուսումն ստանում է նա Ղզլարի ծիական զպրոցում: Այդ միջավայրը սակայն նրան ոչինչ չի տալիս: Մանկութեան հասակից նա զրկւում է հօրից: Այդ օրից էլ սկսում է նրա ընտանեկան թշուառութեան դրաման: Սակայն ուսումնասէր մայրը չի զրկում նրան ուսումից և 1896 թիւն ուղարկում է Նոր-Նախիջևանի «Թեմական զպրոց», ուր նա սովորում է հօթը տարի: Այդ միջավայրում նրա վրայ խոր ազդեցութիւն է թողնում ժամանակակից երաժիշտ Գեորգ Սարկ: Զօրեքջեանը, որ մասնագէտ էր հայկական ձայնագրութեան և եւրոպական կլասիկ երաժշտութեան: Շնորհիւ Զօրեքջեանի Ռումանոսը սովորում և ուսումնասիրում է հայկական ձայնագրութիւնն ու հոգեւոր երաժշտութիւնը և միաժամանակ ոգեւորւում եւրոպական երաժշտութեան կուլտուրական արժէքներով:

Գիւռ 12-13 տարեկան Ռումանոսը զպրոցում աչքի է ընկնում որպէս խմբի լաւ սոլիստ և խմբավար (տեղակալ իր ուսուցչի): Դպրոցական կեանքում նա օգեւորւում է և քանաստեղծութեամբ: Գրում է լիբրեթեան ոտանաւորներ և նրանց վրայ յօրինում երգեր: Բայց դրանով չի սահմանափակւում նրա զպրոցական կեանքի պատմութիւնը: Գիւռ IV-ը դասարանի աշակերտ, նա իր շուրջն է համախմբում արեւստաէր դասընկերներին և կազմում «Փարոս» խմբակցութիւնը, որ իրեն նպատակ է դնում հետաքրքրել և ուսումնասիրել արեւստն ու գրականութիւնը: Խմբակցութիւնը լոյս է ընծայում «Արշալոյս» խորագրով աշակերտական ձեռագիր օրգանը, որ ձգտում է իր մէջ ցոլացնել շրջապատի գեղարեւստական — կուլտուրական երևոյթները: Բայց «Փարոս» խմբակցութիւնը չի սահմանափակւում միմիայն իր միջավայրի կեանքով: Նա իր հայեացքն ուղղում է դէպի Մօսկւայի Լազարեան ճեմարանը, ուր հաւաքւել էին ճեմարանի աշակերտները: Նրանք տոգորւած առաջադիմական իդէալներով համախմբւում են «Յոյս» անունով ձեռագիր մի ալմանախի շուրջ: «Արշալոյս» ու «Յոյսը» շղթայւում են միմեանց ամենասերտ օգակով: Գրական այդ խմբերի մէջ մտնում են ժամանակի առաջադիմական ձգտումներով վառւած լաւագոյն հայ ուսանողները: — Մարտիրոս Աթոյեան, Խաչատուր Չարըխեան, Վահան Տէրեան, Պօղոս Մակինցեան, Յովակ Սանգազեան և ուրիշներ, որոնք «գրական երկրներ» են կազմում, ուր գրական — գեղարեւստական իդէալներ փայփայում, արեւստի ուղղութիւնները քրննադատում և ծանօթանում ռուսական և եւրոպական գրական հոսանքների հետ: Մարքերի այդ շփման ծնունդն է հանդիսանում 900-ական թւականներին հրատարակւած «Փարոս» ալմանախը, որ քննադատական նոր ուղղութիւն մտքից մեր գրականութեան մէջ:

Գիւռ Թեմականի աշակերտ Ռոմ, Մեխիքեանը գրում է երգեր, ոտմաններ, երաժշտական հատւածներ, նոյն իսկ օպերէտներ: Յիշենք «Ժանե — Ժանետտա» օպերէտը: Որից մի քանի կտորներ լոյս են տեսնում «Արշալոյս» և «Յոյս» ալմա-

նախնեերում, Այդ հանգամանքը բարձրացնում է Ռոմանոսի արժեքը, Սակայն նրա անուշը, իբրև երաժշտի, աւելի լայն շրջաններում տարածւում է, երբ «Ժամեռ-ժամեռտառ» առաջին անգամ, 1902 թւին, բեմադրւում է նոր – նախիջկանում, մի խումբ սիրողների կողմից, Բայց նրա առաջին շրջանի սահմանադրժութիւնները լինելով սուսկ մտորումներ, չեն պարզում դեռ գալիք արեւատագէտի ինքնայատուկ գիծը – ուղին: Մի հանգամանք սակայն վերջնականապէս վճռում է նրա կեանքի ուղին: 1902 թւականին յայտնի դերասանուհի տիկ. Սիրանոյշն իր խմբով գալիս է նոր – նախիջկան, մի շարք ներկայացումներ տալու նպատակով: «Իգիլ» ք պիէսայի համար մի քանի երաժշտական հատւածներ գրելու գործը տիկ. Սիրանոյշը, դերասան Ալիխանեանի միջոցով, յանձնում է Ռոմանոս Մելիքեանին, որ ոգևորւած անցնում է գործի և պատրաստում հատւածները: Ներկայացման գիշերը նոյն նուագը աշխարհի ուզվին տպաւորութիւն է թողնում թէ՛ դերասանների և թէ՛ հասարակութեան վրայ, որ ներկայացումից անմիջապէս յետոյ տիկ. Սիրանոյշը գրելում է Ռոմանոսին և համբուրելով նրա ճակատը՝ յորդորում է նւիրել երաժշտութեան: Այն այդ դէպքը խթան է հանդիսանում, որ նա լըժօրէն և մտքող-ջապէս նւիրի երաժշտութեան: Ոգևորւած տիկ. Սիրանոյշն և դերասան Ալիխանեանի գնահատութիւնից՝ նա անցնում է Ռոմանոսի և մտնում տեղի երաժշտանոցը: Գեղարեւոտական արժեքների ուսումնասիրութեամբ նա աւելի է խորանում և մշակւում: Այնուհետեւ նրա առաջ բացւում է երաժշտական մի հարուստ և բեղմնաւոր աշխարհ: Այս անգամ խթան են հանդիսանում նրա մտքի մը ընկերները՝ Խ. Չաւրիեան, Պօղոս Մակինցեան, Վահ. Տէրեան, Յովակ Խանզադեան, զգալով նրա մէջ ապագայի լուրջ երաժշտը, ոգևորում են նրան շտապ անցնել Մօսկա կա-տարելագործելու: Եւ ահա 1905 թւին տեսնում ենք նրան Մօսկայի Լազարեան ճեմարանում երաժշտութեան ուսուցչի պաշտօնով:

Ռուսաստանի բանւոր դասակարգի յեղափոխական շարժման ամենամարկոտ շրջանն է կազմում այդ թականը: Ռուս – Ճապոնական պատերազմը (1904 – 1905 թ.), որ դեռ նոր էր վերջացել, խթան է հանդիսանում նոր յեղափոխական շարժման, Ռուսաստանի զանազան վայրերում տեղի են ունենում բանւորական – յեղափոխական խմբումներ, որոնք բղխում են գլխաւորապէս աշխատաւորների տնտեսական հանգամանքներից: Տնտեսական կոխը անխուսափելիօրէն ստանում է քաղաքական բնոյթ: Եւ ահա Ռուսաստանի զանազան վայրերում պայթում են Յարիզմի դէմ ուղղւած զինւած ապստամբութիւնները: Շարժումներն աճում և սուր կերպարանք են ստանում գլխաւորապէս նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին: Բանւորները ոչ միայն գործադուլ են յայտարարում, այլ և սուրբում են զանգւածային միտինգներ և ցույցեր: Յեղափոխական խմբումներն և բանւորական շարժման հնոց է դառնում գլխաւորապէս Մօսկան: Մասնայական անկում մարտիկները՝ Լենին, Տրոցկի իրենց ընկերներով դեկաւարում են ծաւալւող շարժումները: Յեղա-փոխական շարժումն ոգևորում է և ուսանողներին, որոնք մեծ թափով նետւում են յեղափոխութեան արիւնքների մէջ: Այդպիսի հանգամանքներում ցարական իշխա-նութիւնը սուրբում է կենտրոնական ղարոցներն ու համալսարանները: Եւ ահա ակադեմիական կեանքը տեղի է տալիս հրապարակային շարժման:

Հասարակական տարուբերումները դնում են իրենց խոր կնիքը և հայ ուսա-նողների վրայ, որոնք սոցորւած յեղափոխութեան հրեղէն լօզունգներով, անձնա-տուր են լինում ժամանակի հոսանքին: Այդ ուրորում աւելի է ամրաւում և կոփւում Ռոմանոսի հասարակական – յեղափոխական կամքն ու ոգին: Յեղափո-խական դրութիւնը շարունակւում է մինչև 1906 թականը, որից յետոյ սկսում

են սև ուղակցիայի տարիները, Բարական կառավարութիւնը սխիւնեցող խեղդում է յեղափոխութիւնը, ցրում բանտարական կազմակերպութիւնները, զնդակահարում բազմաթիւ բանտըններին և շատերին էլ Սիրիւր աքսորում:

Յարական ընկալիչայի այդ սև օրերին առաջանում է հոգեբանական մեծ լըում: Այս շրջանի գրականութիւնն ու արւեստը հոգեկան ընկալիչայի, հոգեբանական լըման ցուպցող լաւագոյն հայեիլին է հանդիսանում: Հայ երիտասարդ արւեստագէտները գերծ չեն մնում և այդ ազդեցութիւններից: Վահան Տէրեանի «Մընապոյի անտրընկեր» կամ Ռոմանոս Մելիքեանի «Աւանտուրըր», «Ալեան երգերը» ձաւագոյն նմուշներն են այս շրջանի լըւած հասարակական կեանքի:

Եթէ լըումը, յուսախարութիւնը կերտւածքի հոգեբանական կողմն է, ուրեմն այդ լըման, յուսախարութեան նուրը երանգներին անհրաժեշտ էր արտայայտութեան և նուրը ձեւեր, նուրը տեխնիկա: Եւ ահա հայ արւեստագէտ — ուսանողներն իրենց նպատակ են դնում նոր արւեստի և գրականութեան նոր որոնումների ուղին: Մի կողմից նրանք ուսումնասիրում են ռուսական և եւրոպական նորագոյն արւեստի ձեւերն ու տեխնիկան և մշակում հայ արւեստի նոր ձեւեր, նոր տեխնիկա, միւս կողմից ձաւագոյն նմուշներն են այս շրջանի լըւած հասարակական կեանքի:

Այս շրջանում Ռոմ. Մելիքեանը նոր թափով առաջ է տանում իր ընդհատած պարապմունքները: Երաժշտութեան մասնաւոր դասեր է վերցնում Մոսկայի լաւագոյն թէօրետիկոսների Պրոֆեսոր Տանիւի և Եւալդրսկու մօտ: 1907—1908 ուսումնական տարում մտնում է Մոսկայի կոնսերւատօրիան, ուր տկարութեան պատճառով միայն մի տարի է ուսանում: Այնուհետև բժշկների խորհրդով անցնում է կովկաս, ուր առաջին անգամ, նրա առաջ բացւում է նկարչական, դիւրիչ մի նոր աշխարհ: Կովկասն իր անսահման լեռներով, իր հարազատ միջավայրով և մայրենի լեզուի երաժշտութեամբ նրա վրայ ունենում է այն նշանակալից ազդեցութիւնը, որ նա մօտիկից ծանօթանում և սերտ կերպով շաղկապւում է հայ կեանքի և արւեստի հետ: 1908 թին հրաւիրւում է նա թիֆլիսի «Յոֆանեան օրիորդաց դպրոցի» երաժշտութեան ուսուցիչ և պաշտօնավարում է ուղիղ երկու տարի: Այդ ժամանակաշրջանում նա ցոյց է տալիս երաժշտական — մանկավարժական և հրապարակային բեղմնաւոր գործունէութիւն:

Ինչ է կառուցում նա այդ կարճատե շրջանում, ինչու մէկ է կայանում նրա կատարած դերը: Թիֆլիզում նրա առաջ ծառանում են երաժշտութեան զարգացման մի քանի հրատապ խնդիրներ: Ինչ է հարկաւոր մեր երաժշտական կեանքի զարգացման համար, ինչ ուղղութիւն և ինչ ընթրմաներ են անհրաժեշտ հայ երաժշտութեան: Խնդիրներ, որոնք պիտի կանգնէին մեր առջև վաղ թէ ուշ և հերթական, տանջող դառնային:

Ինչ էր ցոյց տալիս սակայն այդ շրջանի հայ երաժշտութիւնը: Այն, որ պակասում էր հրապարակում հայ երաժշտական իսկական կուլտուրան: Դա ժամանակակից, հրատապ հարց էր, որի էական ու արմատական լուծումը պէտք էր սկսել դպրոցից: Ինչու. Որովհետև դպրոցն էր, որ պատրաստում էր նոր սերունդ, նոր հասարակութիւն և նոր կուլտուրա: Անհրաժեշտ էր ուրեմն ընթրման սկսել հենց դպրոցական կեանքից:

Ո՛րն էր սակայն այդ ընթրման:

Նոր սերունդը տարրական ու միջնակարգ դպրոցներում տարիներ շարունակ դաստիարակւում էր ազգային շինծու մէլօդիաներով և ժողովրդական անմշակ ու միալար լէլէներով: Այդ ուղիով դպրոցական սերունդը ո՛չ երաժշտական ընդհանուր զարգացում էր ստանում և ո՛չ էլ կարողանում էր համամարդկային երաժշտական

կուլտուրական արժեքներն իւրացնել, դա մեր զպրոցների ամենացաւոտ գծերից մէկն էր։ Պէտք էր պայքարել այդ ուսանայի դէմ, Պէտք էր քանդել հին ուղղութիւնը և հակադրել նորը, կենդանին, կենսունակը, ժամանակն էր լրջօրէն նայելու այդ կարեւոր խնդրին։ Եւ ահա այդ հիմնական հարցով ջերմօրէն համակամ ասպարեզ է գալիս Ռոմ։ Մեկիքեանը։ Նա գտնում է, որ ինչպէս մասնուկներին չի կարելի ազգագրական հում նիւթերով մայրենի լեզու սովորեցնել, այնպէս էլ չի կարելի, թէկուզ և ազգային կուլտուրայի տէնդէնցի տեսակէտից, մասնուկների երաժշտական ճաշակը կրթել և դաստիարակել հայ ժողովրդական երգի միակողմանի, սահմանափակ բովանդակութեամբ։ Այդ գիտակցութեամբ էլ նա կեղծ — ազգային և ժողովրդական երգերին հակադրում է ընդհանուր մանկական — երաժշտական — գեղարւեստական գրականութիւնը։

Նա իր շուրջն է համախմբում կովկասի հայ երիտասարդ երաժիշտներին, որոնք միահամուռ ուժերով ներուում են զպրոցական նորանոր երգերի, դասազգրգների և երաժշտական պատկերների մշակման գործին։ Յետագայի մի շարք հրատարակութիւնները — Ա. Մանուկեանի «Փնչիկներ» չլրջ հատոր, Գ. Գեղարքիլի «Մանկական երգերի ժողովածուն», Ռոմ. Մեկիքեանի և Ա. Մանուկեանի «Երաժշտական այլբենարներ», «Դպրոցական երգերը» արդիւնք են զպրոցական երաժշտական կեանքի հէնց այդ բեֆօրմայի։

Բայց ահա ժամանակակից մի այլ հրատապ հարց։ Դա հայ ժողովրդական երգերը կորստից փրկելու, ձայնագրելու խնդիրն էր։ Իր էութեամբ նոր չէր այդ խնդիրը, սակայն Ռոմ. Մեկիքեանն այդ հարցը առաջ է մղում իրայատուկ ըմբռնողութեամբ։ Նրա կարծիքով հայ ժողովրդական երգը միայն այն ժամանակ կ'ունենայ գիտական և գեղարւեստական արժէք, երբ նրա գրի առնում — ձայնագրումը կը լինի մատեմատիկ ճշտութեամբ՝ ֆոնոգրաֆով։ Ֆոնոգրաֆի կարիքն անհրաժեշտ էր երգի կարեւորագոյն հիւսածք — բլիշները չփաստելու տեսակէտից։ Յետոյ՝ երգերի ձայնագրումը պէտք էր կատարել երգի բիօլօգիական էւօլյուցիայով, այսինքն մի երգի հետ օրգանական կապ ունեցող 100 վարիանտ աւելի արժէքաւոր է, քան միմեանցից անշատ 1000 երգ։ Եւ մենք տեսնում ենք, որ Ռոմ. Մեկիքեանի արժարժած այդ խնդիրները շօշափում են պարբերական մամուլում։ Իսկ 7—8 տարեց յետոյ «Թիֆլիսի Հայոց երաժշտական ընկերութիւնը», որի մէջ էր և Ռոմ. Մեկիքեանը, կարողանում է փոքր չափով կիրառել այդ փորձը։

Ժամանակի մի ուրիշ ցաւոտ կողմն էլ ժողովրդական երգի մշակման ձևն էր։ Այդ հրատապ հարցի վերաբերմամբ Ռոմ. Մեկիքեանը մի հիմնական ուղիով է առաջնորդում։ Մշակում ասելով նա հասկանում է ստեղծագործել և ոչ թէ ենթադրական։ Օգտւելով ժողովրդական երգի հիւսածքներից — բլիշներից նա յայտնաբերում է նոր երգ, նոր ստեղծագործութիւն։ Դա է համարում երաժշտագէտը նախազուրը հայ երաժշտութեան պրօգրէսի։ Եւ այդ լօզունգն էլ դառնում է ղեկավարող սկզբունք և անմիջապէս կապւում մեր երաժշտութեան նորագոյն զպրոցի հետ։

Ռոմ. Մեկիքեանի հրապարակային գործերից մէկն էլ նրա երաժշտական ընթացքների մէջ է կայանում։ 1909 թւին թիֆլիսում բանում է մասնաւոր երաժշտական ընթացքներ և տարրական զպրոցների համար պատրաստում ժողովրդական երաժիշտ — ուսուցիչներ։

Հասարակական գործունէութեան հետ զուգընթաց նա ստեղծագործում է և կերտում։ Կովկասի նոր տպաւորութիւնները նրա մէջ առաջ են բերում նոր ձայներ, նոր գոյներ։ Այդ տպաւորութիւնների ազդեցութեան տակ գրում է մի շարք

նոր երգեր, որոնցից հանրածանօթ են տպագրւած « Վարդը », « Աւետիկ », « Անհատութիւն »:

Գալիս է 1910 թւականը: Կատարելագործւելու կրակը զցում է նրան նոր հորիզոններ: Նա մտախից ծանօթանալով հայ իրականութեան երաժշտական կարիքների հետ, շտապում է օր առաջ լրացնել իր երաժշտական ուսման պակասը, որպէս զի կարողանայ աւելի լայն ծրագրով գործել հայ մասսաների մէջ: Եւ ահա աշխատային մի առաւօտ նստում է գնացքը և ուղեւորւում դէպի Պետերբուրգ, գրականում ունենալով միայն 16 մանէթ 60 կոպէկ: Սկսում են տնտեսական ծանր օրերը: Որական ծախսում է նա միայն 4 կոպէկ: Սակայն ցաղցը, նիւթական թշուառութիւնը ո՛չ միայն նրան շնչեղնեցնում, այլ աւելի եռանդ ու ոգևորութիւն են ներշնչում: « Եւ յեմ եղի, գրում է նա իր բարեկամուհի Նինա Ալաջայանին, այնպէս կորովի հոգով, ինչպէս այս քաղցի ժամիկ »... Տնտեսական այդ ծանր հանգամանքների մէջ նա մրցումով ընդունւում է Պետերբուրգի Կոնսերւատորիան և ստանում է ուսանողական ամսաթոշակ:

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ

(Շարառայելի)

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱՍԿԱՆ ԵՆՈՐՀ

Ա Ռ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ս

Ուրախութեամբ լսած էինք ամիսներ առաջ Եգիպտահայ ազգայիններէն միոյն՝ Մ. — Ռափայելեան նախկին աշակերտ և Ռուստիս պատուական բարեկամ Մեծ. Տիար Բուզանդ Մասրաֆի արուած Գահանայապետական շնորհը, որով Մեծն Գրիգորի Հրամանատար տիտղոսին ու պատիւին կը բարձրանար ի վարձ իւր ընտիր ձիրքերուն և օրինակելի գործունէութեան: Միջն պատիւը առանձին հանդէսով մը հաղորդուած էր իրեն՝ ի ներկայութեան ընտանեաց և համակիրներու՝ Գերգ. Գուգեանի կողմէ, ինչ որ ժամանակին մամուլն ալ նկարագրեց:

Այժմ գոհութեամբ կը լսենք որ Եկեղեցւոյ Ընդ. Գլուխը իրաւամբ կը վարձաւորէ նաև վսեմ. Կարապետ Էփ. Մարթ. սեանը, որ իր անձնական ծախքով օժտեր է Եգիպտոսի Հայ Կաթողիկէները՝ նորաշէն եկեղեցիով մը, շնորհելով նոյապէս Մեծն. Գրիգորի Հրամանատարութեան տիտղոսն ու շքանշանը՝ կոնդակով մը հանդերձ: Հանդէսը կատարուեր է ի Փարիզ, Օգոստ. 2ին, անոր Château Fitz James ամա-

րանոցին մէջ ի ներկայութեան ընտանեաց և ազգային ականաւոր անձնաւորութեանց: Արհ. Գուգեան Գերապայծառ շքանշաններն յանձնելէ առաջ կը կարդայ հետեւեալ Քահանայապետական կոնդակը.

Պ Ի Ո Ս Ժ Ա. Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ա Պ Ե Տ

ՄԷՐ ՍԷՐԵՒ ՈՐԵՆՈՅ, « ԷՒՆՅՈՒՆ » ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ
ՕՐՀԱՆՈՒՅԷՆ

Աղեթատերոյ Հայ Կաթողիկէ Հասարակութեան եպիսկոպոս ու Մեր մեծարելի եղբայր Եղիշան Եպիսկոպոս Գուգեան, որ Հոռոմ եկած էր, անձամբ ու գրաւոր աղբիւսագրով Մեզմէ խնդրեց որ Ասպետի ու Հրամանատար բարձր արժանապատուութեամբ պատուեց գրեզ, ըստ որում յոյժ երեւելի և արդիւնաւոր հանգիստացած եւ Եգիպտոսի կաթողիկէ հայութեան մէջ: Ձի Նորին Գերապայծառութիւնը իրազեկ կացոյց զՄեզ այն մեծամեծ ու առատաձեռն նպատենութիւն՝ զոր ըրած եւ թէ կարօտեալներուն և թէ եկեղեցւոյ. մասնաւորապէս այն օժանդակութեան՝ զոր ըրած եւ Պէյրութի ուրբանոցին և, մօտ անցեալի մէջ, Գահիրէ քաղաքին մէջ եկեղեցի մը և առաջնորդարան մը շինել աւաւոյ վեհանձն առատաձեռնութեամբ: Արդ յօժար կամօք և հայրական սիրով նոյն Եպիսկոպոսին ազալանքներուն զիջանելով, և քօ զովելի արդիւնքներուդ ի վարձատրութիւն, ուզելով այնու